

դաւոր ընկերները, շնորհիւ այն բանի որ նոցա ահանջը խնայ-
ուած մնաց, եւ թէ նոքա ազատ ամենայն ահանջային հիւան-
դութիւնից կարողացան յառաջագիմութեան մեծամեծ քայլեր
անել, թէ եւ իւրեանց մտաւոր եւ հոգեկան ընդունակութիւննե-
րով շատ ստոր էին բութ ահանջ ունեցողներէր: Այդպէս, բնու-
թեան պատահական անարդարութիւնը լինումէ մի այլ անգամ
ամբողջ կեանքում մարդկային անարդարութեան աղբիւր:

Գաղտնի Ռոս. «МЫСЛЬ» լրագրէր.

ՍԱՐԳԻՍ ՏԷՐ ԳԱՐԻԲԷԼԵԱՆՑ.

ՎԱՅՐԵՆԻՆԵՐԻ ԿՐՕՆԸ.

(Նոյն-նոյն-իւն Արեւ. 1882 Օգոստոս).

Այս կղզիներին մէջ գաղղիայի խնամակալութիւնն հաստատուելու
ժամանակ, բնիկներն իւրեանց պատերազմական քաջութիւնը ցոյց
տուին. այլեւայլ պատերազմներում հաղարաւոր մարդիկներ հանեցին,
բայց գերիներին ոչ կկողոպտէին և ոչ կտանջէին, և այս բանս գաղղիա-
ցիները գնահատեցին՝ այս ազնուութեան համար ազնուաբար վճարելով:
Վայլ՝ պոլ՝ որ անձնատրութեան ժամանակ ներկայ էր՝ կասէ, թէ Տայի-
տի զինուորները իսկական հսկայներ են, որ կարող էին գաղղիացի կար-
ճահասակ զինուորներին կուլ տալ. և երբ զէնքերը գետին կգնէին՝
լալով կրացագանջէին. «Անդիացիները ստախօս են, եթէ մեք ոսկիի
լեռներ և արծաթի դաշտեր ունենայինք՝ նոքա մեզ օգնութեան կուգա-
յին նոյն իսկ մեր առաջին կոչելուն»: Վուկի հաշուով (որ թերեւս չա-
փազանցաբար լինի զրուած) Սանդուիչեան կղզիներում 400,000 բնակիչ
կային. Հոպկիպսի խօսքով 1823ին նոցա թիւն 130,000 էր. 1849ին
միայն 80,000, իսկ 1860ին բնակեալ եօթն կղզիների վերայ, որ 300
քառ. մղոն տարածութիւն կրունեն՝ առ առաւելն 67,000 կանական
կհաշուէին, և 5,000 օտարականներ, 2նայելով որ նոցա թիւն այսպէս
կպակասի՝ նոցա հետ եղած վաճառականութիւնը վերջի ժամանակներս
չափազանց շատացաւ. 1853ին ներաբերութիւնը միայն 800,000 դոլ-
լարի կհասներ, իսկ արտահանութիւնը 700,000 դոլլարի. 1862ին ինչ-
պէս անգղիական աղբիւրներէ կհաղորդեն, 3,008,603 ֆունտ ստերլին-
գի միայն շաքար արտահանեցաւ, և 1864ին այս թիւը հասաւ
10,414,441 ֆ, Ստերլինգի. Վերջի ժամանակներս այնտեղ սկսան աճե-
ցնել Պերուի բամբակեղէպը, և կարելի է նախագուշակել, թէ Սան-
դուիչեան կղզիները, որ Վալիֆորնեայի հետ ևս բարեկաշող յարաբե-
րութեան մէջ են՝ բիշ ատենէն խաղաղական Ովկիանիի հիւսիսում

սոյնպիսի նշանակութիւն կստանան, ինչպէս Արեւմտեան—Հնդկաստանի կղզիները՝ Աւստրալեան Ովկիանոսում։—Տուրնէր կասէ, թէ Հերրիդեան կղզիներում ևս բնակիչներն արագ-արագ կնուազին։ Այս տեղում հիւանդութիւնների և ներքին կռիւների յաճախելուն պատճառ կհամարուին քարոզիչները, որոց ջանքը վայրենիները քրիստոնեայ դարձնելու՝ վերջի ժամանակներս բոլորովին հակառակ ազդեցութիւն կունենան։ Իսկ Տոնգայեան կղզիներէն, նորա հակառակ՝ լաւ համբաւներ կլսուին։ Բնակիչները կարգապաշտ աղանդաւորների ձեռքով քրիստոնէացած են և նոցա թագաւորը, Գէորգ, իւր հպատակներին քարոզ կուտայ։ Այս գործին մէջ աւելի ջանք և աշխատութիւնը կընծայեն նոր Զէլանդացի Ուայլ՝ Տէր Լաուրի կպիսկոպոսին, նա մի մակոյկով Արշիպիղագոսի հեռաւոր կղզիներն երբ կերթայ՝ իւր ընկերներին երբէք թոյլ չտար որևէ զէնք առնել, և շնայելով սորան՝ ընկերներն ամենափոքր թշնամական ցոյց էլ չեն աներ ոչ իւր և ոչ ընկերներին դէմ։ Փիլիպպեան կղզիների բնակչութիւնն աւելի խիտ է՝ սոքա կայարան կկազմեն Արեւելեան—Հնդկաստանի և հարաւային Ովկիանոսի մէջ, և զեռ մեր թուականէն 200 տարի յառաջ՝ Ասիայի մայր ցամաքին հետ լաւ յարաբերութեան մէջ էին։ Այստեղ 4—5 միլիոն բնակիչ կհաշուի, որ երկապատիկ աւելի է քան թէ Աւստրալիայի բնակչութիւնը։ Սեւամորթները, նախնական բնիկ ցեղը, որի թիւն այժմ ևս Լիւսոնի վերայ 25,000-ի կհասնի—գէպի լեռները քշուեցան նորեկներէն, այսինքն Մալայցիի, 2ինացի և Սպանիացիներէն։ Վերջի ժամանակներս նոր—Զէլանդիան ընդհանուրի ուշադրութիւնը գրաւեց. նորա առողջ, և հիւանալի կլիման, ճոխ և առատ արտադրութիւնները նորան կգասեն զաղթականութեան ամենայարմար տեղերի շարքը։ Բնիկները ներքին խռովութեամբ միմեանց ջնջեցին. նոցա ծայրագոյն բարբարոսութեան օրինակ կարող է լինել այս՝ որ զեռ 1827-ին նոցա մէջ մարդկային զինների առևտուր կար, զինները կչորցնէին և կծախէին, իրրեւ տան զարդ կամ լոկ իրրեւ հետաքրքրութեան առարկայ։ Բայց երբ անգղիացիներն այնտեղ ոտք դրին՝ այս տեսակ բարոյքը փոխուեցաւ, նախ բնիկները կամակոր զիմադրութիւն կանէին անգղիացիներին, թէպէտև սոքա ևս նշանաւոր եղան իւրեանց անգթութեամբ, որի համար Տոմսոն իւր «Նոր—Զէլանդիայի նուաճում» գրքին մէջ կասէ. «Բրիտանացիներն իրրեւ վայրենիներ վարուեցան, և վայրենիներն՝ իրրեւ քաղաքակիրթ ժողովուրդ»։ Բայց վերջն՝ երբ անգղիական լուծն ընդունեցին՝ տեսնուեցաւ՝ որ շատ ընդունակ են լուսաւորութեան և ամենատեսակ արհեստների։ Պ. Զորջ Գրէյ նոցա զարգացման շատ նպաստեց՝ անխտիր ամեն դաւանութեան քարոզիչներին առատաձեռն վարձատրելով։ Ինչպէս ընդհանրապէս բոլոր բազմակղզեցիները (polinezia), այսպէս և նոր—Զէլանդացիները չափէ դուրս շատախօս են և ձիւրք ունին ոտանաւորի ձեւով խօսելու՝ ինչպէս և Հիւսիս—ամերիկայեան հնդիկները, և իւրեանց բարբառին վերայ շատ կպարծենան ու անգղիացիներին կստիպեն՝ որ

այն սովորին, երբ 1845 ին Հեկէ պետն ապստամբելով Աորորորիկայ քաղաքն առաւ՝ վայրենիները գաղթականների վերաբերութեամբ իրենց լաւ պահեցին, յայտարարելով թէ՛ իւրեանց կռիւն անգղիական զինուորների և զրօշի զէմն է. նաեւ, եպիսկոպոսի խնդրանքին զիջանելով՝ չվնասեցին օղիով լի տակառներին, որ իւրեանց ձեռքն էին անցել: Արթութիւնն այստեղ նշանաւոր յառաջադիմութիւն կազգէ. այսպէս, պետերը մշակելի հող ձեռք կրերեն, հանքեր կգործեն, նաեւ կշինեն ևլն: Բնիկները գաղթականներին հետ մրցութեան ելնելով՝ սկսեցին նաեւ ձիերի երամակներ պահել, և իրենք իսկ նոր Զէլանդացիներն երևելի հեծեալներ են, Ռանգիգայստի ծերունի պետը, որ երբեմն 17 անգղիացիների գլուխ կտրել էր իւր ձեռքով՝ այս պատճառով որ մի կռուի ժամանակ նոքա զնգակով իւր մի կինն սպանել էին, և որ զեռ 1849 ին Անգղիացիների ձեռքէն փախած՝ անմատչելի ժայռերի, ճահիճների և անտառների մէջ կթափառէր, յիսուն թուականին արդէն ուշադրութիւն դարձուց ճանապարհների շինութեան վերայ՝ մի քարոզիչի ձեռնտուութեամբ, և միութարուեցաւ՝ որ իւր շինել տուած խճուղիների վերայէն ճանապարհորդեց: Այս օրինակ արագ փոփոխութիւնը՝ քաղաքակրթութեան պատմութեան մէջ առաջինն էր, բայց միևնոյն ժամանակ երևեցաւ որ խախուտ էր: Աւերջի ժամանակներս բնիկները նորէն սկսեցին գաղթականներին նեղել, որին Անգղիացիներն էլ նոյնպէս աւերիչ պատերազմներով կպատասխանեն, և կրթութեան խաւար կողմերը սոցա կօգնեն՝ բնիկներին ջնջելու: Մէկ Անգղիացի սպայի վկայութեամբ, որ 1860—63 թուերում՝ Նոր-Զէլանդիայի զէմ եղած արշաւանքներին մասնակից էր՝ նորէն Անգղիացիներն են յանցաւոր խառնակութեան նորոգուելուն:

Մարիսները (բնիկները) դեղեցիկ և քաղաքակրթութեան ընդունակ ցեղ են, բայց Անգղիացիներն անխնայաբար իւրեանց օգտին կճառայեցնեն նոցա յատկութիւնները, որ եթէ ուղէին նոցա երջանկացնել և միևնոյն ժամանակ շարունակ բարեկամական յարաբերութիւն ունենալ հետերին՝ բաւական էր որ նոցա տնտեսականութիւն սովորեցնէին և առևտուրը պաշտպանէին: Նոր Զէլանդացիների նուազումն այնքան զգալի եղաւ, որ մինչև իսկ Առաւմարութիւնը պաշտօնապէս սկսեց քրննութիւն բանալ այս մասին: Անգղիական հաշիւներէ կերելի, որ սպիտակները Նոր Զէլանդիայում 1851 էն մինչև 1861 թուական 26,707 էն աճեցան մինչև 98,915, մինչդեռ բնիկները, որ 1841 ին 104,000 ի չափ կհաշուուէին՝ 1858 ին 54,467 հոգի էին մնացել: Հետևորդ 5 տարիներում նոքա 15 էլ պակասեցան, այնպէս որ 1864 ին հաղիւ 47,000 վայրենի մնացին: Իսկ 1864 ի դիտեմբերին Եւրոպացիների թիւն հասել էր արդէն 171,931 ի, որոց 6000 ը Գերմանացի էին: Եւ որովհետեւ այս կղզին դեռ ևս աղատ է ծաղիկ ու Եւրոպական ուրիշ տարափոխիկ հիւանդութիւններէ, և ոգելից ըմպիլիները շատ աննշան ազդեցութիւն կանեն. ուրեմն ժողովրդի նուազելու պատճառ կհամա-

րուին ներքին կռիւները, որգեսպանութիւնը (որի դէմ այժմ ազդու միջոցներ կգործադրուին), արիւնխառնութիւնն, փտած հացարդս- ներն իրրե կերակուր գործածելը (որ նոցա մէջ քաղցրաւենի կհամարուի) և զգեստ հանգնելու սովորութիւնն, որ մինչև այն ժամանակ արտաքին ազդեցութիւնների դէմ եփուած և կազմ վայրենիի մարմինը կթուլացնէ։ Ուէլլէս իրրե բոլորովին հակապատկեր Անգղիացիների վարմունքին կցուցնէ Հոլլադացիներն, որ Յէլէբէս կղզին կտիրեն 1677 թուէն ի վեր։ Այս կղզին բնակող Մալայեան ցեղն այժմ գրեթէ հասած է Եւրոպական քաղաքակրթութեան։ Նոցա բարեմիջակութեան շատ նպաստեց սրճաբոյս մշակելը՝ որ այդտեղ մտուցին Հոլլանդացի քարոզիչները։ Պառավարութիւնը՝ տեղական արդիւնքի մի մասը պետերին թողնելով՝ նոցա մղեց դէպի այդ բոյսի մշակութիւնը։ Նա այդ կղզին կկառավարէ բնաւորական խոհեմ՝ եղանակով, որ ամենալաւ հետեանքներ կարտադրէ։ Վայրենիներն այն ինչ կծանօթանան հողէն արդիւնք հանելու հնարաւորութեան՝ արդէն բարեմիջակութեան աղբիւրը կգտնեն և նրանով բարոյքի պնդուանալու ուղին կթեւակոխեն։ Այսպէս, արմաւի իւղը արեւմտեան Ափրիկէի շատ բնակիչներին համար իսկապէս կրթական միջոց կհամարուի, վասն զի նորանով նոքա յարաբերութիւն կունենան օտարականների հետ։ Այս բանս այժմ սկսել են հասկանալ նոյն իսկ սեւամորթների պետերը։ Ուելլիմի թագաւորը՝ Վայեանգ սպային ասաց. «Նրբես պատերազմի կգնամ» վառօդ ու մարդ կփճացնեմ և շատ անգամ էլ ինձ համար օգուտ չեմ ունենար, կամ եթէ ունենամ, ուրիշների կրած վնասի հաշուով կստանամ։ Բայց երբ առևտուր անեմ, թէ ինձ բարեք կանեմ և թէ ուրիշին, և միևնոյն ժամանակ ուրիշին չարեք արած չեմ լինիր»։ Հետեւեալ թուերն, այն կողմերի առևտուրին հետզհետէ ծաղկելը ցոյց կուտան։ 1787ին Անգղիան Արեւմ. Ափրիկէի և Մարոկկոյի հետ 72,000 ֆ. Ստերլինգի առևտուր արաւ. 1816ին այս թիւը բարձրացաւ 535,577ի, իսկ այժմ գրեթէ 3 միլիոն ֆ. ստի հաւասար է։ Բարեյուսոյ Հրուանդանում Անգղիացիներն աւելի խաղաղաբար կվարուին բնիկներին հետ, քան Նոր Զելանդիայում, իսկ Հոլլանդացի գաղթականները՝ տեղական Բազուտ վայրենի ցեղէն շատ նեղութիւն կկրեն, Բրիտանական Պառավարութիւնը՝ որ Պաֆրերի դէմ մղած անվերջ պատերազմներով փորձառութիւն ունեցաւ՝ այստեղ իրեն օրէնք է արել, որ վայրենի ազատ ցեղերի անկախութիւնը չխլէ։

Բոլորովին հասկանալի է մարդկային զարգացման ստոր աստիճանին վերայ գտնուած վայրենի ցեղերի գրեթէ անհրաժեշտ կորուստը, այն թափառական մարդերն իւրեանց ազատ կեանքէն զրկուելով՝ նորա համար կհալին, կմաշին ինչպէս վանդակը գրուած գազանները։ Այս վիճակն ունին Նոր — Հոլլանդիայի և Վան — գիմենեան բնիկները։ Բայց միթէ նոցա մարմնաւոր և հոգեկան տգեղութեան պատճառով մեք աւելի քիչ պէտք է կարեկցենք վերանին, կամ պիտի չաշխատենք նոցա բարձրացնել մինչեւ մարդկային կատարեալ դիպարը։ Ճանապարհորդների

խօսքով՝ Նոր Հողանդացի վայրենուհիէն աւելի զգուական տեսք չլինելու
 Նորա հիւժուած և ծուռ ոտքերը, տանձաձեւ կախընկած ծծերը, որ
 կարող է մինչև իսկ ուսին վերայ նետել, խոր ընկած արիւնալից աչքերը,
 և երբեմն գլխին վերայ կտրատուած մորթը, ուսկից շարունակ շարաւ
 կծիւրէ՝ այնպիսի գարշելի պատկեր կներկայացնեն, որի վերան գաղա-
 փար ունենալ կարող է միայն նա, որ արդէն տեսած է այսպիսի էակ-
 ներ, մերկանգամ, և տնային կարասիներն և տղան կոնակնին շալկած,
 Բայց, լաւ կերակուրի ազդեցութեամբ՝ Աւստրալիայի շատ ցեղերի ար-
 տաքին ձեւերը բարեփոխուեցան.— Աիկտորիայ գաղթականութեան մէջ
 այժմ միայն 1,764 Հարաւ— Աւստրալիայի մէջ 3,540, Արեւմտեան
 Աւստրալիայում 350 բնիկ կհաշուեն. Ստէնդ բրիջ, որ Աիկտորիայի և
 Հարաւ— Աւստրալիայի ներքին կողմերի ցեղերին հետ 18 տարի անցու-
 ցած է՝ նոցա կնկարագրէ՝ իրբն ամենակոշտ մարդակերներ, Նոքա Նո-
 րածին երկխան անպատճառ պիտի ուտեն, եթէ նորանէ նախորդ տղան
 դեռ ոտք ելած չէ. և կհամարին թէ սպանեալէն որչափ շատ ուտեն,
 այնքան յոգնին կշատանայ. Հերշտէկէր կասէ թէ Ադէլայիդայի և
 Մորրէյի գաղթականութիւններին մերձաւոր ցեղերն իւրեանց յաղթած
 թշնամիների ճարպը հանելով իւրեանց վերայ կքսեն, որպէս թէ նոցա
 յոյժն իրենց անցնելու համար, Բայց սոյն այս Հերշտէկէրը Տորրէյեան
 նեղուցի կղզիներէն մէկին մէջ Աւստրալիացի շատ բարեհոգի ցեղ մի
 գտաւ, եւ Հարաւ— Աւստրալիական ցեղերին պաշտպան Մուրգուալին
 նման կհամարի, թէ վայրենիի թշնամութեան առաջին պատճառ
 տուողը նոյն ինքն Եւրոպացին է. Յիշեալ ցեղերի բուն բնաւորութիւնը
 կերելի այս աղերսագիրէն, որ Եարրի և Գոուլթուրնի բնիկները մատուցել
 են Մէյլ՝բուրնի նահանգապետին, խնդրելով որ նա Աիկտորիայ թա-
 գուհիին հասցնէ. Այնտեղ գրուած էր. «Աւաւուրոնգ, Բոնուրոնգ և
 Տարափարաքալ՝ ցեղերի սեւամորթները կյուղարկեն իւրեանց մօր, Աիկ-
 տորիայ թագուհիին, Մեք և ուրիշ սեւ շատ ցեղեր շնորհակալութիւն
 կյուղարկենք մեր մօր, շատ և շատ բաների համար, Սեւրն այժմ իւ-
 րեանց նիզակները վայր են ձգել և զրեթէ այնպէս կապրին, ինչպէս
 սպիտակները. Սեւրը լսեցին որ աւագ որդիդ պսակուել է. Շատ լաւ,
 Սեւրը նորան և քեզ—նորա մօր, Աիկտորիային, կմաղթեն ամեն
 բարիք. Սեւրը Միամէն և Մելլումէն եկան բարի նահանգապետին մօտ
 այս թղթով. նա քեզ աւելի շատ բան կասէ, Շրջակայումն եղած
 բոլոր սեւերը նորա հետ համաձայն են. Ահա մեր ասելիքը. Գրին
 հետ գրուած էին իբրեւ ընծայ՝ օպպոսումի մորթ և մի քանի նիզակ,
 Վան—գիմենեան երկիրի բնիկներն այն օրէն հետէ սկսան պակասիլ,
 երբ Անգղիացիներն այս կղզին գաղթականութիւն շինեցին իւրեանց
 արքայութեան համար, Եւրոպական հասարակութեան այս զրդերն
 այնտեղ ամենավատթար շարագործութիւններ արին. Օրինակ, մէկն
 իւր առջևէն կքէր մի կին, որի վզէն, զուարճութեան համար՝ կախել
 էր նորա սպանուած ամուսինի գլուխը. 1820 ին այնտեղ դեռւս 6000

ընդ կգտնուէին, բայց այնպէս արագութեամբ պակասեցան, որ 1830 ին կենթադրէին, որ պէտք էր ողջ մնացած մի քանի մարդերը վանել Պասմանիայ լճերակողին: Սակայն այս գործն յաջողութիւն չունեցաւ: 1842 ին նոքա մասամբ ստիպուելով փոխադրուեցան Ֆլինդեր կղզին Բասովի նեղուցին մէջ: 1843 ին այս եղկելիների թիւը նուազեցաւ մինչև 54 ի: 1847 ին նոցա նորէն տեղափոխեցին դէպի Օյստէր — Կով, ուր տեղ նիկսոն եպիսկոպոսը նոցանէ կենդանի գտաւ: 1857 ին միայն 16 հոգի: 1860 ին Անգղիական պաշտօնական հաշիւներէն կերելի, որ Վան — զիմնեան երկրի երբեմն 10 ցեղէն մնացել էին ընդ ամենը 14 հոգի: — 9 կին և 5 արու, որոցմէ չորս զոյգը պսակուած, բայց անորդի էին: Վայրենիներն իրենք կասէին, որ իւրեանց ջնջուելու պատճառը՝ կեանքի եղանակի փոփոխութիւնն է: 1862 ին կենդանի մնացել էին մէկ արու և 7 կին: Ինքը նիկսոն նոցա կենդանագիրներն հանեց և Եւրոպայ բերեց: 1864 ին Հորարտ — Տոուն նահանգապետի պատրաստած հանգիսին մէջ յառաջ եկաւ մի տասմանիացի երեք կիներով: Սոքա վերջին մնացորդներն էին այն ամբողջ ցեղերին, որ մի քանի տարիում ոչնչացան: Տեղական լրագիրը նոցա վերայ այս տապանագիրը շարագրեց. «նոցա գտանք վայրենի, ասրեցան իբրեւ վայրենի, փճացան իբրեւ վայրենի»:

Վերջին ժամանակներումս ուշադրութիւն դարձուեցաւ նաև ասիական կիսավայրենի ցեղերի պակասելուն վերայ, որ հպատակած են ուսական իշխանութեան: Սարալիսկին իւր « Սիրիերայի նամակներ » ին մէջ կգրէ թէ, Սիրիերի նախկին բոլոր բազմութիւն ընդկներէն այժմ մնացել են միայն Խրիւղ, Եակուդ, Բուրեատ և Տունգուսները: Միւս ցեղերը կամ բոլորովին անհետացել են և կամ շատ տխուր հատուկտորներ են մնացել: Ռուսներն այն ընդկներին հետ վարուեցան ճիշտ այնպէս, ինչպէս Ապանիացիներն՝ Ամերիկայում: Նագիր Ստեփանովը թշուառ Բուրբատներին մորթաղերծ անելուն մէջ յետ չէր մնար ամերիկացի մի վայրենիէ: Իւր մականունը « Նագիր » (нагибъ — թեքող) այն պատճառով ընդունեց, որ իրեն զուարճութիւն էր արել նորարոյս ծառերի գլուխներն իրարու լճեքել, Բուրեատը նոցա ճիւղերին կապել և բաց թողնել, որ խեղճը պատառ պատառ լինի: Սոլովեով անունով մէկը քանի մի հատ Ալեուսներ մի կարգով իրարու հտեւէ շարեց, և լայնափող հրացանով առաջինի ախանջէն զարկեց, որպէս զի փորձէ, թէ գնդակը քանի՞ գլխի մէջէ կարող է ծակել անցնիլ: Այս տեսակ անդթութիւններէ ազատուող խեղճ ընդկները կմաշուէին ծաղիկ և աստղկեան ախտերով և արբեցութեամբ:

Ուրեմն ամեն կողմ միեւնոյն օրինակները կ'ընդլայնուին: Բայց կարծես թէ իբրեւ նշան անսպառ ոյժի, որ ընդթիւնը շոյալել է նաև վայրենի մարդին՝ Ամերիկեցի սեւամորթը յաղթանակով ելաւ այս տանջանքի բովէն: Հազարաւոր տարիներէ հետէ նորան տղմի մէջ կ'ըմաւալեցնէին, իբրեւ ստրուկ կտանջէին, իբրեւ վտաթմար մի ասլրանք՝ կ'վաճա-

ոէին, հայրենիքէն դուրս կը շէին — վերջապէս ամեն կերպով կնուստացնէին, թէ բարոյապէս և թէ բնապէս, բայց նա ոչ միայն չկորսուեցաւ, այլ մարդկային երջանիկ բարեկենսութեան ուղիին վերայ է հիւսիս — ամերիկայեան մեծահոգի ազգին շնորհքով, Արեւմտ թշուառ դրութիւնը այն ժողովուրդներէ, որ մինչև այսօր տգիտութեան մէջ կ'ըմարթափեն, կամ նոյն իսկ քաղաքակրթութեան զոհերը կ'լինին, ըստ ամենայնի պէտք է ծանրանայ լուսաւորուած ազգերի խղճին վերայ, եւ թէ ոչ իրրեւ յանցանք՝ գոնէ իրրեւ նախապէք նորա անուանեալ լուսաւորութեան Տարակոյս չկայ, որ վայրենին ընդունակ է կրթութեւ, բայց մեր ժամանակի երագող կրթութիւնը չուզեր հանդարտութեամբ դործել, նա կ'պարծենայ սորանով որ փոխանակ նախնական վայրի անտառերին կ'լանգնեցնէ, հազիւ մի երկու տասնեակ տարեկան թափառող փառաւոր քաղաքներ, բայց չկորհիւ թէ այն երկիրը վերէն վար յազեցած է վայրենիների արխանով, Հարաւային նոր վալլիսի նոյն եզերքներին, ուր Առկ տեպիլ էր փմրեակներով թափառող բնիկներ՝ այժմ կանգնած են քաղաքներ, որ Աւրոպայի մայրաքաղաքների փայլովը կը շողշողին, զարդարուած պալատներով, եկեղեցիներով, համալսարաններով, մատենադարաններով, թանգարաններով, թատրոններով, նոցա մէջ լրագիրներ կ'ապուին, աշխարհահանգէս, նուագերգ, ձիարշաւներ կ'կատարուին . . . Ենդդիական գաղթականութիւններն այստեղ կտարածուին զարմանալի արագութեամբ, Հար. նոր վալլիսն հիմնուեցաւ 1788 ին, Տասմանեայ 1803 ին, Արեւմտեան Աւստրալիայ 1829 ին, Հարաւային Աւստրալիայ 1836 ին, նոր Զելանդիայ 1840 ին, Աիկտորիայ և Նուինպենգ 1859 ին, 1861 ին Աւստրալիայում դանուած բոլոր գաղթականների թիւն արդէն հասել էր 1,184,858 մարդի, Աշխարհիս երեսէն մի քանի աննշան և վայրենի ցեղերի պակասելը կրթութեան տարածուելուն արգելք չլինել, Աւր լոյս կայ՝ կայ և խաւար, Մեր մեծ քաղաքների շքեղութեան հետ, ամենակատարեալ լուսաւորութեան և բարեկրթականութեան մէջ բռնել են աղքատութիւն, ապականութիւն և յանցանք, Մարգիային ազատ զարգացման առջև դրուած բազմաթիւ խոչընդոտներն այստեղ կ'ծնանին և՛ քաղց և բարոյական ապականութիւն, Սակայն մարդասիրութիւնը կ'փութայ թշուառներին օգնութեան, և հազարաւոր ձեռքեր զէպի նոցա կ'մեկնեն ըստ կարողութեան՝ օգնականութեան մի տուրք՝ սա յուսալ կուտայ թէ եւրոպական կրթութիւնն որեւիցէ օր մի իրեն պարտք պիտի համարի վալլենին էլ իրրեւ մարդ ճանաչել, և թէպէտ նոյն իսկ իւր արժանիքի և յառաջագիմութեան համար, չինայէ իւր ձեռքէն եկած բոլոր միջոցներն ի գործ գնել՝ նոցա դաժանակիր վիճակը թեմեկնելու:

(Թարգմ.)

Ապրիլի 22-ու Մայիսի 1-ու մէջ.